

աշխարհական հաւատացեալներուն հարցուցեր է՝ զո՞վ կը բաղձան իրենց Առաջնորդ, եւ ամէնքն Անտոն Արքեպ. Պուրադեանն ուզեր են: Բիչ ետքը Մոհչիււի լատին Մետրապօլիտն Ստանիսլաուս Սէստրէնչէվիչ նոյն 1817 Դեկտ. 10ին կը գրէ Անտոն Արքեպ.ին, որ կենացն ընթացքն համառօտիւ հաղորդէ, որպիսութիւնն իմանալու եւ պէտք եղած տեղեր տեղեկութիւն տալու համար: Անտոն Արքեպ. ութ կտոր վկայականներ ղրկելով եւ առանձին գրութեամբ մը տեղեկութիւններ կու տայ, ինչպէս կ'երեւայ այն ինքնագիր նամակէն զոր յառաջ պիտի բերենք: Հ. Արիստ. Վ. Ազարեան, Վիեննական Միտիթարեան (յետոյ ԱբբաՏայր) որ 1821ին մինչեւ Մոհչիւիւ եւ Ղարասուպազար Ճամբորդած եւ հիւր եղած է Անտոն Արքեպ.ին (19 Ապր. 1821), կը գրէ անոր մասին (թղ. 10 Յուլ. 1821 ի Լեմբերգ). «Է այր անկեղծ եւ անիկնթէրէս, կամեցօղ բարեաց հասարակաց, անինչ եւ արհամարհօղ փարթամութեան եւ հայր աղքատաց»,

Արդէն 1817 Դեկտ. 10ին Մոհչիււի ադմինիստրատոր Վարդերեսեւիչ իմացուց Անտոն Արքեպ.ին, որ Մետրապօլիտն Հռոմ գրած է ի նպաստ իրեն հաստատութեան ի Ս. Գահէն: Թաջորդ տարին Մարտ 26ին հայ կաթողիկէ հասարակութիւնն ալ լատին Մետրապօլիտին գրեց եւ խնդրեց՝ որ հաճի ուր հարկն է դիմում ընել՝ որպէս զի Անտոն Արքեպ. Մոհչիււի հայ եպիսկոպոսին յաջորդ անուանուի: